ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0090, ք.Երևան, Շոպրոնի 77

N 91/11/27 02.06 2023թ.

Գայանե Գաբրիելի Գաբրիելյանին
Հասցե՝ ք. Երևան, Մյասնիկյան պ., 16.

Ուղարկում եմ Ձեր դիմումի հիման վրա ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունքում իրականացված վարչական բողոքարկման վարույթի արդյունքում թիվ 8300533628 վարչական ակտն անփոփոխ թողնելու մասին որոշումը:

Առդիր՝ << 4 >> թերթ:

Պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ՝ ***Ա. Մաթևոսյան***

Կատ.՝ Վ. Բալասանյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 12.04.2023թ-ին կայացված թիվ 8300533628 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

« 19 » 05 2023թ. ք. Երևան

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ Ա. Մաթևոսյանս, վերանայելով Գայանե Գաբրիելի Գաբրիելյանի և Վիոլետա Յուրիի Գաբրիելյանի 19.04.2023թ. դիմումի հիման վրա հարուցված վարչական բողոքարկման վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

12.04.2023թ.-ին ժամը 11:15-ի սահմաններում Երևան քաղաքի Հանրապետության Հրապարակից «Միցուբիշի» մակնիշի 36 AG 380 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը տարհանվել է պահպանվող հատուկ տարածք՝ Թայրովի 14 հասցե՝ «Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 955-ն որոշման հավելված 1-ի Ձև 1-ի 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի պահանջի խախտման համար: ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկ Գևորգ Բաբայանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենքի 124-րդ հոդվածի 23-րդ մասով կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և կայացվել թիվ 8300533628 որոշումը՝ Գայանե Գաբրիելյանին տուգանելով 20.000 ՀՀ դրամ գումարի չափով, տուգանային միավորի կիրառմամբ՝ 0.5 միավոր:

Գայանե և Վիոլետա Գաբրիելյանները 19.04.2023թ.-ի դիմումով խնդրել են անվավեր ճանաչել պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 12.04.2023թ.-ին Գայանե Գաբրիելյանի նկատմամբ կայացված թիվ 8300533628 որոշումը՝ և նույն տուգանքը վերահասցեագրել Վիոլետա Գաբրիելյանին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունքում հարուցվել է վարչական բողոքարկման վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով սահմանված կարգով վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու և լսված լինելու հնարավորություն տալու նպատակով դիմողը հրավիրվել է պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունք:

Դիմումի քննարկման արդյունքում ձեռք բերված ապացույցների և փաստական տվյալների համադրմամբ պարզվել է, որ վարչական իրավախախտման գործով 12.04.2023թ. կայացված թիվ 8300533628 որոշումը ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ և հիմնավորմամբ.

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայողի պարզաբանման համաձայն՝ պահպանվող հատուկ տարածքում առկա տվյալների հիման վրա, որտեղ՝ Գայանե Գաբրիելյանն է ներկայացել որպես «Միցուբիշի» մակնիշի 36 AG 380 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի շահագործող, վերջինիս նկատմամբ կազմել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, ծանոթացրել կազմված արձանագրությանը, ինչի վերաբերյալ Գայանե Գաբրիելյանը չներկայացնելով առարկություններ և բացատրություններ ստորագրել է կազմված արձանագրության համապատասխան դաշտում, որից հետո կայացրել է թիվ 8300533628 որոշումը:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կանգառ է համարվում մինչև 5 րոպե կամ ուղևորի նստելու, իջնելու և (կամ) տրանսպորտային միջոցը բեռնելու, բեռնաթափելու համար անհրաժեշտ ժամանակով տրանսպորտային միջոցն անշարժ վիճակի բերելը:

«Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. հունիսի 28-ի N955-ն որոշման հավելված 1-ի Ձև 1-ի 3.27 «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանի համաձայն՝ արգելվում է տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը: 3.27 նշանը կարող է կիրառվել 1.4 գծանշման հետ համատեղ, ընդ որում, նշանի ազդման գոտին որոշվում է գծանշման երկարությամբ:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ երթևեկության մասնակիցների համար խոչընդոտ ստեղծող կամ կայանումն արգելված տեղերում կանգնած տրանսպորտային միջոցները տեղափոխվում են հատուկ տարածք, եթե վարորդը տեղում չէ կամ հրաժարվում է վերացնել խոչընդոտը կամ կայանման կանոնների խախտումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 23-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը, եթե դրա պատճառով տրանսպորտային միջոցը տարհանվել է պահպանվող հատուկ տարածք կամ «Հաշմանդամներ» ճանապարհային նշանով (ցուցանակով) կահավորված վայրում «Հաշմանդամ» ճանաչման նշանով չկահավորված տրանսպորտային միջոցը կանգնեցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, տուգանային միավորի կիրառմամբ՝ 0.5 միավոր:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

Ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, մասնավորապես թիվ 8300533628 վարչական ակտը՝ պարզ է դառնում, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 255 հոդվածի համաձայն՝ 12.04.2023թ.-ին Գայանե Գաբրիելյանի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, որը առանց առարկություններ և բացատրությունների ստորագրվել է վեջինիս կողմից, ինչից հետո կայացվել թիվ 8300533628 որոշումը: Նշված որոշումը վարչական իրավախախտում կատարած անձին է հանձնվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283 հոդվածի համաձայն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում է՝ դրա կազմելու ամսաթիվն ու տեղը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը. տեղեկություններ խախտողի անձի մասին. վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը և էությունը. այն նորմատիվ ակտը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ իրավախախտման համար. վկաների և տուժողների ազգանունները և հասցեները, եթե այդպիսիք կան. խախտողի բացատրությունը. գործի լուծման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Արձանագրությունը ստորագրում են այն կազմող անձը և վարչական իրավախախտում կատարած անձը. վկաների և տուժողների առկայության դեպքում արձանագրությունը կարող են ստորագրել նաև այդ անձինք:

Եթե իրավախախտում կատարած անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, դրանում այդ մասին նշում է կատարվում: Իրավախախտում կատարած անձն իրավունք ունի ներկայացնելու արձանագրությանը կցվող բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, ինչպես նաև շարադրելու այն ստորագրելուց իր հրաժարվելու շարժառիթները:

Արձանագրություն կազմելիս խախտողին բացատրվում է սույն օրենսգրքի 267 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, որի մասին արձանագրության մեջ նշվում է արվում:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական պատասխանատվության ենթարկվող անձը իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաբանի իրավաբանական օգնությունից. ելույթ ունենալու մայրենի լեզվով և օգտվելու թարգմանի ծառայություններից, եթե չի տիրապետում այն լեզվին, որով տարվում է վարույթը. գանգատարկելու գործով որոշումը: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե՝ այն ստորագրությամբ առձեռն հանձնվել է հասցեատիրոջը, կամ հասցեատերը հրաժարվել է որոշումն ստանալուց, և առկա է որոշումը հանձնողի նշումն այդ մասին:

Ելնելով վերոգրյալից հայտնում եմ, որ թիվ 8300533628 վարչական ակտը կայացված է Գայանե Գաբրիելյանի նկատմամաբ և առկա չեն վարչական ակտը անվավեր ճանաչելու

հիմքեր, ինչպես նաև վերը նշված խախտման համար չի կարող պատասխանատվություն կրել այլ անձ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և սոցիալիստական իրավագիտակցությամբ:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով նույն օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 12.04.2023թ. կայացված թիվ 8300533628 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Գայանե և Վիոլետա Գաբրիելյաններին և ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գունդ:

Պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության գնդապետ՝ ***Ա. Մաթևոսյան***